

րաններ հաղուագիւտ են: 1130ի անանուն ուխտաւոր մը՝ Արիմաթիան Լիւզէն չորս մղոն կը հաշուէ: 1160ի երկու հրովարտակներ կը յիշեն Ս. Յովսէփի Հերպերգ արբան: Տիրացի Կիլեօմ կը յիշէ Սամարիք անուամբ ուրիշ արբա մը Ս. Յովսէփ Արիմաթացի եկեղեցիին (Musul., ԺԷ. 26): Անտարակոյս այս վըկայութիւնները Rentisի համար պէտք է ընդունիլ: Rentisի դիրքը ուխտաւորներու ճանապարհէն հետի ըլլալով՝ կը րացատուիր անոնց, ինչպէս նաև առաջին իրազակրաց լուծիւնը Արիմաթայի մասին: Տարակուսելի չէ որ ոչ միայն Սաչակիրները կը բացատրեն աւանդութիւն մը զոր երկրին քրիստոնէաներուն մօտ գըտած են, և թէ այդ աւանդութիւնը կը բարձրանայ մինչև Դ. դար: Rentis ուրեմն, բնիկ տեղեկութիւններէն դուրս, ունի Եւսերիօսի և Յերոնիմոսի, իրենց ժամանակին, ինչպէս նաև Երուսաղէմի լատին թագաւորութեան վկայութիւնները: Այս է հին և վաւերական աւանդութիւնը (Séu Dict. de la Bible, բառն Ari-mathie):

## 2. Ռեմլէի հիմնարկութիւնը եւ նկարագրութիւնը ըս արաբ պատմագիրներու .

Հոս մէջ կը բերենք արաբ մէկ քանի պատմագիրներու նըկարագրութիւնները Ռեմլէի հիմնարկութեան ու նկարագրութեան մասին:

874ին Եագուպի կը գրէ թէ «Պաղեստին գաւառին մայրաքաղաքն է Ռեմլէ. ան հիմնարկուած է Սիւլէյման խալիֆայէն: Լիւզը առաջին մայրաքաղաքն էր, որուն բնակիչները գաղթեցին անկէ. և Լիւզը ամայացաւ: Ան ունէր փոքր գետակ մը, ուրկէ կը խմէր ժողովուրդը. Ապու Ֆուգրուս գետակը 12 մղոն հեռի էր: Ռեմլէի ժողովուրդը իր խմելիք ջուրը կը հայթայթէր թէ՛ ջրհորներէն և թէ՛ ջրամբարներէն, ուր կը հաւաքուէին անձրեկի ջրերը: Ռեմլէի ժողովուրդը կը բաղկանար արաբներէ, յոյներէ և սամարացիներէ»:

869ին Պիղասուրի կը գրէ. «Էլ-Վալիտ խալիֆան իր Սիւլէյման եզբայրը կառավարիչ կը կարգէ Պաղեստինի գաւառին, որ իր բնակարանը կ'ընտրէ Լիւզի մէջ: Յետոյ Սիւլէյման հիմնեց